«Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում»

<u>Ընդհանուր տեղեկատվություն</u>

Ոլորտ ՝	Հանրային կառավարում
Տևողություն ՝	4 տարի
Իրականացման ժամանակահատված ՝	2017-2021
Ընդհանուր բյուջե ՝	20 մլն եվրո
Բյուջետային աջակցություն ՝	12 մլն եվրո
Լրացուցիչ աջակցություն ՝	8 մլն եվրո

Ծրագրի նկարագիր

Նպատակ: Բարձրացնել Հայաստանի կենտրոնական հանրային կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունը և արդյունավետությունը՝ ելնելով քաղաքացիների և գործարարության կարիքներից:

Հատուկ նպատակներ

Նպատակ I: Կենտրոնական հանրային կառավարման մակարդակում այնպիսի քաղաքականության ու օրենսդրության մշակման և համակարգման խթանում, որը կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարթակ է ապահովում:

Նպատակ II: Քաղաքացիական ծառայությունում պրոֆեսիոնալիզմի բարձրացում և արդյունավետ գործունեության ապահովում:

Նպատակ III: Հանրային կառավարման ոլորտում հաշվետվողականության, բարեվարքության և հրապարակայնության մակարդակի բարձրացում

Նպատակ IV: Էլեկտրոնային կառավարման միջոցով հանրային ծառայությունների մատուցման բարելավում

Բարեփոխումների շրջանակ:

- Կառավարությունում ներառական և փաստերով հիմնավորված քաղաքականության և օրենսդրության մշակման ամրապնդում և պետական

կառավարման նոր իրավական-կարգավորիչ դաշտի մշակում, էլեկտրոնային նույնականացման քարտի և էլ. քաղաքացիության բարեփոխումների վերջնականացում:

- Քաղաքացիական ծառայության նոր իրավական-կարգավորման դաշտի ստեղծում, այդ թվում, կանանց և տղամարդկանց հավասարության վրա հիմնված մարդու իրավունքների քաղաքականություն, նոր պաշտոնների դասակարգման համակարգի և կարիքների վրա հիմնված վերապատրաստման համակարգի ստեղծում:
- Պետական պաշտոնյաների հայտարարագրերի և էթիկայի հանձնաժողովի կողմից գործի նախաձեռնման համար ռիսկերի գնահատման նոր մեթոդաբանության և պրակտիկայի մշակում:
- Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կառավարման և մոնիթորինգի կարողությունների հզորացում և 2015 թ. անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ներդրում:
- Էլեկտրոնային առողջապահության ազգային ռազմավարության/ճանապարհային քարտեզի և էլեկտրոնային առողջապահության ստանդարտների վերանայում և ընդունում, առողջապահական հաստատություններում ընտրված էլեկտրոնային առողջության տվյալների կառավարման համակարգերի պիլոտային ծրագրերի ներդրում նշանակված օպերատորի կողմից: